# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

«18» մարտի 2019թ. N ՄՈ/100-2019

ք. Արմավիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 02-Ի N 176-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2019 թվականի փետրվարի 4-ի N 259-Ա հրամանով հաստատված հավելվածի 7-րդ կետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի փետրվարի 13-ի N ՎՀ/ՊԳ.2/1602-19 գրությունը.

**որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2017 թվականի մայիսի 02-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Արմավիրի արյան փոխներարկման կայան>> պետական փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի աշխատանքի վարձատրության պայմանների որոշման մասին>> N 176-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) որոշման 1-ին կետում <<180000 (մեկ հարյուր ութսուն հազար)>> բառերը փոխարինել <<220000 (երկու հարյուր քսան հազար)>> բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Invalid signature

X

VERIFIED OCSP 3/18/2019 17:11:23 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230